Անվճար զանգահարեք մեզ

1-800-511-2300

կամ այցելեք

dhcs.ca.gov/OPL

Անգլերեն, իսպաներեն, արաբերեն, հայերեն, կամբոջերեն/քմեր, կանտոներեն, պարսկերեն, հինդի, հմոնգ, ճապոներեն, կորեերեն, լաոսերեն, մանդարին, պունջաբի, ռուսերեն, տագալոգ, թայերեն և վիետնամերեն:

(մատչելի է 24/7)

Կրծքի և արգանդի վզիկի քաղցկեղի առկայությունը ստուգելու այս անվճար թեստերը ստանալու համար, դուք պետք է

- Ապրեք Կալիֆորնիայում:
- Համապատասխանեք տարիքային ահանջներին:
- Չունենաք կամ ունենաք սահմանափակ առողջության ապահովագրություն:
- Ունենաք առողջության ապահովագրություն, որի համավճարը կամ չհատուցվող գումարը դուք ի վիճակի չեք վճարել:
- Ունենաք ցածր ընտանեկան եկամուտ:

Խտրականության բացառման հայտարարություն

Կալիֆորնիայի Առողջապահական խնամքի ծառայությունները ենթարկվում են քաղաքացիական իրավունքների մասին համապատասխան դաշնային օրենքներին և խտրականություն չեն դնում ռասայի, մաշկի գույնի, ազգային պատկանելության, տարիքի, հաշմանդամության կամ սեռի հիման վրա:

Լեզվական աջակցության ծառայություններ

Si habla español, usted puede conseguir ayuda para entender este documento, hablando con su proveedor de atención primaria del programa EWC o llamando al Contratista Regional de su condado. Los teléfonos del Contratista Regional se encuentran abajo. Esta asistencia lingüística es gratis.

如果您說漢語，我們可以幫助您瞭解這份文檔。請諮詢您所在地EWC附近診所或當地負責聯絡人。當地負責人電話見下文，他們會免費提供說明服務。

PLACE LABEL HERE

Every Woman Counts

DHCS

1-800-511-2300

dhcs.ca.gov/EWC

© 2017 Department of Health Care Services. All Rights Reserved.

Armenian 8/2017

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿԻՆ ՊԵՏՔ Է ՀԱՃՎԻ ԱՌՆՎԻ

Կրծքի քաղցկեղի անվճար զննումներ

Ի՞նչ է Յուրաքանչյուր կին պետք է հաշվի առնվի ծրագիրը:

Յուրաքանչյուր կին պետք է հաշվի առնվի (Every Woman Counts) ծրագիրը տրամադրում է կրծքի և արգանդի վզիկի քաղցկեղի անվճար զննումներ ու հետևողական ծառայություններ: Սա ներառում է կրծքի կլինիկական ստուգումներ, մամոգրաֆիա և Պապ թեստեր իրավասու կանանց համար Կալիֆորնիայում:

Երբ կինը ծերանում է, մասնավորապես 50 տարեկանից հետո, կրծքի և արգանդի վզիկի քաղցկեղի առաջացման հավանականությունն ավելանում է: Կանայք պետք է կանոնավոր կերպով բժշկի կողմից զննվեն կրծքի և արգանդի վզիկի քաղցկեղի համար:

Ինչու՞ պետք է կրծքի քաղցկեղի զննում անցնեք:

- Կրծքի ստուգումներն օգնում են բժշկին տեսնել կամ զգալ ձեր կրծքի որևէ փոփոխություններ:
- Մամոգրաֆիան կարող է հայտնաբերել կրծքի քաղցկեղը, որը շատ փոքր է, որպեսզի դուք կամ ձեր բժիշկը զգաք այն:
- Երբ կրծքի քաղցկեղը շուտ է հայտնաբերվում, այն ավելի հեշտ է բուժել:

Ինչքա՞ն հաճախ պետք է կրծքի քաղցկեղի զննում անցնեք:

Եթե 40 տարեկան եք կամ ավելի բարձր, զրուցեք ձեր բժշկի հետ այն մասին, թե երբ ու ինչքան հաճախ պետք է ստուգվեք կրծքի քաղցկեղի համար:

Յուրաքանչյուր կին պետք է հաշվի առնվի ծրագիրն առաջարկում է անվճար՝

- Կրծքի կլինիկական ստուգումներ և մամոգրաֆիա 40 տարեկան և ավելի բարձր տարիքի կանանց համար:
- Զննումներ ախտանիշներ ունեցող 40 տարեկանից ցածր տարիքի կանանց համար:
- Պապ թեստեր 21 տարեկան և ավելի բարձր տարիքի կանանց համար:
- Պապ և ՄԻԱՎ (HPV) միասնական ստուգում 30 տարեկան և ավելի բարձր տարիքի կանանց համար:
- Հետևողական ստուգումներ, եթե անհրաժեշտ է:

Կրծքի քաղցկեղի որոշ նախազգուշացնող նշանները և/կամ ախտանիշները ներառում են՝

- գունդ կամ այտուց կրծքում կամ թևի տակ,
- Կրծքի չափսի կամ ձևի փոփոխություններ,
- Կրծքի կամ պտուկի մաշկի կառուցվածքի կամ գույնի փոփոխություն (փոսիկներ, կնճիռներ, կարմրություն, մաշկի թեփուկներ կամ հաստացում),
- Պտուկի ռետրակցիա կամ ինվերսիա,
- Արտադրություն պտուկից և/կամ
- Կրծքի ցավ:

Խնդրում ենք հաշվի առնել, որ այս զգուշացման նշաններն ու/կամ ախտանիշները կարող են տեղի ունենալ կրծքի քաղցկեղից բացի նաև այլ դեպքերում:

1-800-511-2300
dhcs.ca.gov/OPL

Ինչու՞ պետք է արգանդի վզիկի քաղցկեղի զննում անցնեք:

- Արգանդի վզիկի քաղցկեղի զննման թեստերը Պապ թեստն է և ՄԻԱՎ թեստը:
- Պապ թեստը ստուգում է բջիջների փոփոխություններն արգանդի վզիկում, որոնք կարող են քաղցկեղ առաջացնել:
- ՄԻԱՎ թեստը ստուգում է վարակի առկայությունը, որը կարող է նպաստել բջիջների փոփոխություններին արգանդի վզիկում:
- Բջիջների այս փոփոխությունների բուժումը կարող է կանխել արգանդի վզիկի քաղցկեղը:

Ինչքա՞ն հաճախ պետք է արգանդի վզիկի քաղցկեղի զննում անցնեք:

Յուրաքանչյուր կին պետք է հաշվի առնվի ծրագիրն առաջարկում է անվճար Պապ թեստեր 21 տարեկան և ավելի բարձր տարիքի կանանց համար, որոնք որակավորվում են, և այնուհետև յուրաքանչյուր երեք տարին մեկ, եթե պատասխանները նորմալ են:
30 տարեկան կամ ավելի բարձր տարիքի կանայք կարող են ընտրել Պապ ստուգում՝ ՄԻԱՎ ստուգման հետ միասին, եթե ցանկանում են ստուգվել յուրաքանչյուր 5 տարին մեկ: Եթե երկու թեստերի պատասխանները նորմալ են, ապա հետագա մի քանի տարվա ընթացքում արգանդի վզիկի քաղցկեղ ունենալու հավանականությունը շատ փոքր է: